ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 99/62-Լ «29» 05 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՐՈՇ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ներքին կարգապահական կանոնների 30-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. 2026 թ. հունիսի 1-ից ԵՊՀ վարչական, տնտեսական և օժանդակ կազմի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկը կատարել բացառապես էլեկտրոնային նույնականացման համակարգի միջոցով:
2. Սահմանել, որ էլեկտրոնային նույնականացման համակարգում աշխատողի աշխատաժամանակի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունն առաջացնելու է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավական հետևանքներ (կարգապահական տույժերի կիրառում, պահումներ աշխատավարձից և այլն):
3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնին, հաշվապահական հաշվառման վարչությանը, ԵՊՀ վարչական, տնտեսական և օժանդակ կազմի բոլոր աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ